

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր



Է.Մ. Սանդոյան

«28» փետրվարի 2025 թ.

ԿԱՐԾԻՔ

Մարինե Արթուրի Ավետիսյանի «ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը» թեմայովատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2024 թվականի օգոստոսի 07-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 08-25):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ներսեսյան Կարեն Վասիլիի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, Չախոյան Էլիզա Միքայելի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Կարապետյան Էդգար Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Իրինա Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Տիգրանյան Վարսիկ Իշխանի, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հակոբյան Էսթեր Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Արմինե Արզումանի՝ ավագ դասախոս, Ավետիսյան Լարիսա Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հանիսյան Հրայր Հովիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գալստյան Անի Համլետի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (գրախոսող), Պետրոսյան Գարիկ Արմենակի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (գրախոսող), Պետրոսյան Հեղինե Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Նաշիկյան Լիլիա Աշոտի՝ ավագ դասախոս, Ստեփանյան Իվետա Կարենի՝ ավագ դասախոս, Սիմոնյան Ռամելա Ակսելի՝ ավագ դասախոս, Սարգսյան Լիլիթ Կարենի՝ ավագ դասախոս, Կարապետյան Անուշ Արմենի՝ դասախոս, Պապյան Զինավարդ Կարենի՝ դասախոս, Շմավոնյան Էլեն Հակոբի՝ ասպիրանտ, Աշոտյան Սամվել Սամվելի՝ ասպիրանտ, Մելքոնյան Գեորգի Արամի՝ ասպիրանտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2008 թվականի ֆինանսական ճգնաժամը ցույց տվեց, որ գների կայունությանն ու տնտեսական աճին միտված կենտրոնական բանկերի նպատակները կարող են լրջորեն խաթարվել ֆինանսական անկայունության պայմաններում: Բացի այդ, ավանդական դրամավարկային քաղաքականության սահմանափակումները մեծապես անտեսում էին ֆինանսական կայունության հարցերը: Ճգնաժամը ստիպեց կենտրոնական բանկերին իրականացնել անսովոր դրամավարկային քաղաքականություն՝ ինչպիսին գրոյից ցածր տոկոսադրույքների քաղաքականությունն էր: Այս միջոցառումներն ընդգծեցին ֆինանսական կայունության զուգորդման անհրաժեշտությունը դրամավարկային քաղաքականության հետ: Այսպիսով, մակրոպրոդենցիալ կարգավորումը ձեռք բերեց կարևորագույն նշանակություն՝ որպես ֆինանսական կայունությունը բարելավելու գործիք: Ի տարբերություն ավանդական միկրոպրոդենցիալ կարգավորման, որը կենտրոնանում է առանձին հաստատությունների ֆինանսական կայունության վրա, մակրոպրոդենցիալ կարգավորումը նպատակ ունի մեղմել համակարգային ռիսկերն ու կանխել ֆինանսական անհավասարակշռությունների կուտակումները: 2009 թվականից սկսած աշխարհի շատ կենտրոնական բանկեր սկսեցին ֆինանսական համակարգի կայունության ապահովումը դիտարկել որպես հիմնական նպատակ կամ նպատակներից մեկը:

2015 թվականին ուժի մեջ մտած նոր Սահմանադրության համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի համար հիմնական նպատակներ սահմանվեցին գների և ֆինանսական կայունության ապահովումը միաժամանակ: Սա նշանակում է, որ ՀՀ կենտրոնական բանկը, բացի դրամավարկային քաղաքականության իրականացումից, պետք է իրականացնի նաև մակրոպրոդենցիալ քաղաքականություն՝ ուղղված ֆինանսական համակարգի կայունության ապահովմանը:

Ֆինանսական կայունության և դրամավարկային քաղաքականության արդյունավետ համադրումը դեռևս լայն ուսումնասիրությունների և քանակական գնահատումների կարիք ունի: Ֆինանսական կայունության և դրամավարկային քաղաքականության փոխազդեցության ճիշտ ըմբռնումը կարևոր է կայուն տնտեսական աճի ապահովման և ապագա ճգնաժամերի կանխարգելման համար: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրելուց վեց տարի անց դրամավարկային և մակրոպրոդենցիալ քաղաքականությունների համադրման արդյունքների վերաբերյալ գնահատական տալու համար անհրաժեշտ է այս ուղղությամբ կատարել հետազոտություն: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում նաև հստակեցնել ֆինանսական կայունություն և ֆինանսական համակարգի կայունություն հասկացությունները: Այդ նպատակով ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության բազմակողմանի վերլուծությունը խիստ կարևոր և արդիական է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության վերլուծությունն ու գնահատման մոտեցումների մշակումը: Հիմնական նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. վերլուծել դրամավարկային քաղաքականության զարգացման միտումները և իրականացման մոտեցումները,

2. ուսումնասիրել անհնարին երրորդությունը դրամավարկային քաղաքականության ներկա պայմաններում,
3. վերլուծել ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և դրամավարկային քաղաքականության համադրելիությունը,
4. քննարկել ֆինանսական համակարգի կայունության ապահովման մոտեցումներն ու վեր հանել գնահատման խնդիրները,
5. հետազոտել ՀՀ մակրոտնտեսական հիմնական ռիսկերը ֆինանսական համակարգի կայունության ապահովման համատեքստում,
6. իրականացնել ՀՀ ֆինանսական համակարգի կայունության գնահատում՝ բնութագրող համաթվի կառուցման միջոցով,
7. իրականացնել ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումն ու վեր հանել դրանում առկա խնդիրները,
8. ուսումնասիրել ՀՀ մակրոպրոդեցնցիալ քաղաքականության ռազմավարության անհրաժեշտության հարցը,
9. մշակել և առաջարկել ՀՀ մակրոպրոդեցնցիալ քաղաքականության ռազմավարության հայեցակարգային դրույթներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտական աշխատանքում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթներն արտացոլված են հետևյալ հիմնական դրույթներում.

1. Մշակվել է դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակի ընտրության հարցում կենտրոնական բանկերի կողմից հաշվի առնվող չափորոշիչների SMART սկզբունք և տրվել է ֆինանսական համակարգի կայունության նոր՝ ընդգրկուն սահմանում:
2. Կառուցվել է ՀՀ դրամավարկային և մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունների երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների համադրության մատրիցա:
3. Մշակվել է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող համաթիվ՝ հիմնված ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշտադիտարկվող ութ գործոնների համախմբի վրա՝ կիրառելով Հիմնական բաղադրատարրերի վերլուծության (Principal Component Analysis) ծավալների կրճատման մեթոդը:
4. Վեկտոր-ավտոռեգրեսիոն (Vector Autoregression) մոդելավորման միջոցով գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա:
5. Առաջարկվել է Եվրոպական համակարգային ռիսկի խորհրդի չափորոշիչներին բավարարող ՀՀ մակրոպրոդեցնցիալ քաղաքականության ռազմավարության հայեցակարգային դրույթներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները հնարավոր է օգտագործել ինչպես մեթոդական, այնպես էլ գործնական խնդիրներ լուծելիս, թե՛ ազգային, թե՛ միջազգային ֆինանսատնտեսական

կարգավորումներ մշակելիս: Հիմնական շահառուներ կարող են հանդիսանալ պետական մակրոտնտեսական քաղաքականություն մշակողները, ֆինանսական համակարգի մասնակիցները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 146 մեքենագիր էջի վրա (առանց հավելվածների), ներառում է 41 գծապատկեր և 28 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել են թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Դրամավարկային քաղաքականության իրականացման տեսամեթոդաբանական մոտեցումներն ու ֆինանսական համակարգի կայունության համադրելիության հիմնահարցերը» գլխում իրականացվել է դրամավարկային քաղաքականության զարգացման միտումների ուսումնասիրություն, իրականացման մոտեցումների վերլուծություն: Անդրադարձել է կատարվել «անհնարին երրորդության» հայեցակարգին և դրա արդիականությանը, կատարվել է նաև ՀՀ մակրոպրոդեցնցիալ և դրամավարկային քաղաքականությունների համադրելիության վերլուծություն: Ներկայացվել է ՀՀ-ում դրամավարկային և մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունների երկարաժամկետ ու կարճաժամկետ նպատակների համադրության մատրիցա:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը խոչընդոտող գործոնների վերլուծություն և գնահատում» գլխում ուսումնասիրվել են ֆինանսական համակարգի կայունության ապահովման մոտեցումները, գնահատման խնդիրները, դիտարկվել են ֆինանսական համակարգի կայունության ապահովման համատեքստում ՀՀ մակրոտնտեսական հիմնական ռիսկերը: Մշակվել է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող համաթիվ: ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վերաբերյալ որոշակի ամբողջական գնահատումներ տալու նպատակով առանձնացվել են ԿԲ կողմից մշտադիտարկվող 8 ցուցանիշներ, սակայն օգտագործելով դրանք իբրև ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող համաթվի բաղադրիչներ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և դրամավարային քաղաքականության փոխազդեցության դրսևորումները և գնահատումը» գլխում VAR մոդելավորման գործիքակազմի օգնությամբ գնահատվել է ֆինանսական համակարգի կայունության համաթվի (FSI), Փոխարժեքի փոփոխության (EXR), ֆինանսական պարբերաշրջանի համաթվի (FCI) և Վերաֆինանսավորման տոկոսադրույքի (RFR) փոխազդեցությունը՝ դիտարկելով վերջիններիս 2013-2023 թվականների եռամսյակային ժամանակային շարքերը: Կառուցվել են համապատասխան իմպուլսային արձագանքման ֆունկցիաներ (Impulse response functions), կատարվել է «Գրեյնջեր Բաուսալիթի» թեստավորում (Granger Causality Test) և Կանխատեսման սխալի շեղումների տարրալուծում (Forecast error variance decomposition, FEVD):

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ներածությունում ժամանակակից տնտեսական միտումների, ֆինանսական կայունության հետ կապված առկա հիմնախնդիրների և տարածաշրջանային մակրոտնտեսական գործընթացների համատեքստում թեմայի ընտրությունը և արդիականությունը բավարար հիմնավորված չէ, հստակ հասկանալի չէ գիտական հետազոտությունների այն բացը, որը հեղինակը պատրաստվում է հետազոտել:
2. Առաջին, երկրորդ, երրորդ և հինգերորդ նորոյթները վերաձևակերպման և հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես՝
 - i. Առաջին և հինգերորդ նորոյթները իրենցից ենթադրում են առաջարկություններ, որոնք գիտական նորոյթ չեն կարող համարվել, քանի որ աշխատանքում դրանց կիրառությունը և նպատակահարմարությունը բավարար չափով չի հիմնավորվել: Առաջին նորոյթում նշվում է նաև, որ հեղինակի կողմից տրվել է ֆինանսական կայունության նոր՝ ընդգրկուն սահմանում, որը վերոնշյալ տրամաբանությամբ ևս չունի բավարար գիտական և պրակտիկ արժեք և նշանակություն:
 - ii. Աշխատանքի երկրորդ նորոյթը վերաբերում է ՀՀ դրամավարկային և մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունների երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների համադրության մատրիցի կառուցմանը: Վերջինս, ինչպես կարելի է հասկանալ աշխատանքից, հիմնված է գրականության վերլուծության արդյունքում հեղինակի կողմից իրականացված դատողությունների վրա և բացակայում է դրա կիրառության հնարավոր արդյունքների վերաբերյալ իրականացված բավարար հետազոտությունը: Արդյունքում նվազում է կառուցված մատրիցի գիտական և պրակտիկ նշանակությունը, հարցականի տակ դնելով դրա՝ աշխատանքի նորոյթների ցանկում ներառելու հնարավորությունը:
3. Գրականության ակնարկը հիմնականում հիմնված է համընդհանուր տեսությունների վրա, որոնք հաշվի չեն առնում արագ փոփոխվող ֆինանսական կոնյունկտուրան: Գրեթե բացակայում է թեմային վերաբերող վերջին 3-5 տարվա հետազոտությունների ուսումնասիրությունը: Ատենախոսության մեջ ներկայացված են հիմնականում 2000-ականների սկզբի և 2010-ականների աղբյուրներ, մինչդեռ վերջին 5 տարիներին՝ 2019-2024 թթ., ֆինանսական կայունության, դրամավարկային և մակրոպրոդեցնցիալ քաղաքականության վերաբերյալ հրապարակվել են բազմաթիվ ուշադրության արժանի ուսումնասիրություններ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ տարբեր հեղինակների աշխատությունները ներկայացված են առանց դրանց համեմատության ու վերլուծության: Չի ցուցադրվում, թե որոնք են նրանց հիմնական տարբերությունները, հակասությունները կամ համընկնումները, ինչն էլ կօգներ առավել ճշգրիտ վերհանել այն ակադեմիական բացը, որի լրացմանն ուղղված է ատենախոսական աշխատանքը:
4. Աշխատանքի 2-րդ գլխում հեղինակն իրականացրել է ֆինանսական համակարգի կայունության համաթվի հաշվարկ՝ օգտագործելով ֆինանսական կայունությունը բնութագրող 8 ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ կիրառված մոտեցումը ընդունելի է որպես գիտական հետազոտության մեթոդ, սակայն համաթվի հաշվարկման

արդյունքում ստացված ցուցանիշների նկարագրությունը բավարար չի եղել հեղինակի կողմից մշակված մեթոդաբանությունը հիմնավորելու համար: Օրինակ, համաթվի ամենացածր արժեքը ստացվել է 2015 թվականի համար, սակայն հեղինակը չի մանրամասնում, թե արդյո՞ք այդ տարի իրապես նկատվել են ֆինանսական անկայունության երևույթներ: Որպես համաթվի ցածր արժեքի պատճառ նշվում է միայն «Ն տնտեսության վրա նավթի համաշխարհային գների անկմամբ պայմանավորված ցնցումների հնարավոր ազդեցությունների մասին, որոնք սակայն, կարող էին հանգեցնել մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացմանը (օրինակ ՀՆԱ-ի անկմանը կամ աճի դանդաղմանը, ինչպես հեղինակը ցուցադրել է Գծապատկեր 2.3.2-ում), սակայն, թե ինչպես են ազդել ֆինանսական կայունության վրա, աշխատանքում չի նշում:

5. Ատենախոսությունում հեղինակը ներկայացնում է, թե ինչ մոդելներ գոյություն ունեն հետազոտվող կապի գնահատման համար, սակայն չի հիմնավորում VAR և PCA մոդելների ընտրությունը: Բացի այդ աշխատանքում բավարար չի քննարկվել նշված մոդելների սահմանափակումները և տվյալների մշակման, մոդելների արդյունքների կայունության ստուգման գործընթացը: Օրինակ, VAR մոդելները զգայուն են տվյալների ընտրության, կարճաժամկետ/երկարաժամկետ կապերի և լագերի ընտրության հանդեպ: Չի նշվում, թե արդյոք իրականացվել են ստուգումներ ավտոկոռելյացիայի, գծային կախվածության, լագերի ճիշտ ընտրության կամ մոդելի կայունության համար: Աշխատանքի 3.1 գլխում VAR մոդելի միջոցով գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ֆինանսական կայունության վրա, և նշվել է, որ իրականացվել է նաև կանխատեսման սխալի շեղումների տարրալուծման արդյունքները (forecast errors variance decomposition), սակայն դրա գծապատկերը ներառված չէ աշխատանքում, այլ արդյունքները քննարկվում են միայն տեքստային: Առավել ինֆորմատիվ կլիներ variance decomposition-ը ցուցադրել նաև գծապատկերի տեսքով:
6. Ատենախոսության մեջ բացակայում է տրամաբանական կապը տարբեր բաժինների միջև: Օրինակ, ատենախոսության էմպիրիկ մասը պարունակում է վիճակագրական տվյալների վերլուծություն և մոդելավորման արդյունքներ, սակայն դրանք չեն համադրվում նախապես ձևակերպված տեսական ակնկալիքների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարինե Արթուրի Ավետիսյանի «ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը» թեմայով թեկնածական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Մարինե Արթուրի Ավետիսյանի «ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական

աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Է. Մ. Սանդոյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝

Մ.Հ. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների»
ամբիոնի դոցենտ
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա.Հ. Գալստյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի ավագ դասախոս
տնտ. գիտ. թեկնածու՝

Գ.Ա. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝

Ռ. Ս. Կասաբաբովա